4.5. Նախքան աճուրդի սկսվելը Կազմակերպիչը գրանցում է մասնակիցներին, ստուգելով նրանց ինքնությունը, լիազորությունները հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված այլ փաստաթղթերը և յուրաքանչյուր մասնակցին, ներկայացված մասնակցի վկայականի համարին համապատասխան, տրամադրում է քարտեր:

4.6. Աճուրդի մասնակիցների մասին տեղեկությունները հրապարակման ենթակա չեն:

5. ԱՃՈՒՐԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

5.1. Աճուրդները անց են կացվում դասական /գնի ավելացման/ կամ հոլանդական /գնի նվազեցման/ եղանակներով:

5.2. Աճուրդը անց է կացնում աճուրդավարը, որը հրապարակում է աճուրդի ձևը, գնային հայտեր ներկայացնելու կարգը, լոտի անվանումը, բնութագրող ցուցանիշները, մեկնարկային գինը, աճուրդային նվազագույն քայլի չափը, որը սահմանվում է գույքի մեկնարկային գնի 5 տոկոսի չափով և կարող է կլորացնել հարյուր դրամի ճշգրտությամբ մինչև առավելագույն ամբողջ թիվը:

5.3. Աճուրդի մասնակիցը բարձրացնում է իր մասնակցի վկայականի համարին համապատասխանող քարտը, որով տալիս է իր հանաձայնությունը հայտարարված գնով լոտը ձեռք բերելու մասին:

Աճուրդավարը շարունակում է աճուրդը այնքան ժամանակ, քանի դեռ չի մնացել առավելագույն գին առաջարկող մեկ մասնակից, որից հետո աճուրդը դադարեցվում է :

Այն դեպքում, երբ հայտարարված գնով լոտը ձեռք բերելու հանաձայնություն չի լինում, աճուրդավարը կրկնում է մեկնարկային գինը: Լոտը մեկնարկային գնով /հոլանդական աճուրդի

դեպքում նվազագույն գնով/ երեք անգամ առաջարկելիս գնորդների բացակայության դեպքում տվյալ լոտի աճուրդը համարվում է չկայացած:

5.4. Ղասական աճուրդի դեպքում յուրաքանչյուր մասնակից կարող է լոտի գինն ավելացնել մեկ կամ մեկից ավելի քայլերով կամ քայլի չափից ոչ պակաս գումարով, բարձրացնելով մասնակցի վկայականի համարին համապատասխանող համարը /քարտը/:

Աճուրդավարը շարունակում է աճուրդն այնքան ժամանակ, քանի դեռ չի մնացել առավելագույն գին առաջարկած մեկ մասնակից, որը համարվում է աճուրդում հաղթած մասնակից՝ աճուրդավարի կողմից առաջարկված գինը երրորդ անգամ հայտարարելու և մուրձիկի երրորդ հարվածից հետո:

5.5. Հոլանդական աճուրդի դեպքում աճուրդավարի կողմից մեկնարկային գինն իջեցվում է այնքան, մինչև մասնակիցներից մեկը բարձրացնելով իր մասնակցի վկայականի համարին համապատասխանող քարտը, տալիս է իր համաձայնությունը հայտարարված գնով լոտը ձեռք բերելու մասին և աճուրդավարի կողմից անմիջապես համարվում է աճուրդում հաղթած մասնակից:

5.6. Հոլանդական աճուրդի ժամանակ վաճառքի գինը չի կարող իջեցվել մեկնարկային գնի 50 տոկոսից, սակայն ոչ պակաս, քան լոտի հաշվեկշռային արժեքի 30 տոկոսը:

5.7. Ղասական աճուրդի ժամանակ, եթե մի քանի մասնակիցներ միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, որից հետո ավելի բարձր գնային հայտ չի ներկայացվել, ապա աճուրդավարը վիճակահանությամբ որոշում է աճուրդում հաղթող համարված մասնակցին, եթե գործող օրենսդրությամբ աճուրդի մասնակիցներից որևէ մեկը աճուրդի ժամանակ առաջարկված հավասար գնային պայմանների դեպքում չունի տվյալ գույքը ձեռք բերելու նախապատվության իրավունք:

5.8. Վիճակահանությամբ աճուրդում հաղթող համարված մասնակցի որոշումը կատարվում է հետևյալ պայմաններով.

Աճուրդավարը հայտարարում է միաժամանակ հայտ ներկայացրած մասնակիցներին, այնուհետև մասնակիցների մասնակցի վկայականին համապատասխան համարը պարունակող քառածալ թղթերը դրվում են ծրարների մեջ և լցվում ոչ թափանցիկ արկղի մեջ: Աճուրդում հաղթող մասնակից է համարվում այն մասնակիցը, որի մասնակցի վկայականին համապատասխանող համարը աճուրդավարը առաջինն է հանում արկղից:

5.9. Հոլանդական աճուրդի ժամանակ, եթե մեկից ավելի մասնակիցներ միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, ապա աճուրդավարը որոշում է միաժամանակ հայտ ներկայացրած մասնակիցներին և այդ մասնակիցների միջև իրականացվում է Ղասական աճուրդ՝ նրանց կողմից առաջարկած գինն ընդունելով որպես մեկնարկային գին: Եթե մեկնարկային գնից բարձր առաջարկներ մասնակիցները չեն ներկայացնում աճուրդում հաղթած մասնակից է համարվում սույն կանոնակարգի 5.8. կետով սահմանված

պայմաններով վիճակահանությամբ ընտրված մասնակիցը, եթե չկա տվյալ գույքը ձեռք բերելու նախապատվության իրավունքով օժտված մասնակից:

5.10. Աճուրդում հաղթող ճանաչված մասնակիցը և Կազմակերպիչը ստորագրում է են աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը, որից մեկը, հաղթողի կողմից լրիվ վճարումները կատարելու դեպքում, Կազմակերպիչը երեք օրվա ընթացքում տրամադրում է հաղթողին:

5.11. Եթե աճուրդի հաղթող ճանաչված անձը արձանագրության վերաբերյալ առարկություններ ունի, ապա դրանք նշվում են արձանագրության մեջ:

6. ԼՈՏԻ ՊԻՆԸ

6.1. Լոտ/եր/ի գինը սահմանվում է ավագանու որոշմամբ:

6.2. Լոտ/եր/ի գինը չի կարող պակաս լինել ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափերից: Անշարժ գույքի/ բացառությամբ հողամասերի/ աճուրդ-վաճառքը կարող է իրականացվել միայն լիցենզավորված կազմակերպության կողմից այն գնահատվելուց հետո: Ընդ որում, մեկնարկային գին սահմանելիս, եթե գույքի գնահատված արժեքը փոքր է դրա հաշվեկշռային արժեքի 30 տոկոսից, ապա ավագանին մեկնարկային գին է սահմանում գույքի հաշվեկշռային արժեքի 30 տոկոսից ոչ պակաս գումարը:

7. ԼՈՏԻ ՊՆԻ ԿՃԱՐՈՒՄԸ

7.1. Աճուրդի մասին հրապարակային ծանուցմամբ, ժամկետ սահմանված չլինելու դեպքում աճուրդում հաղթող ճանաչված անձը արձանագրությունը ստորագրելու օրվանից 10 օրվա ընթացքում պարտավոր է վճարել լոտ/եր/ի գինը:

Աճուրդում հաղթող ճանաչված անձին տրվում է վճարման հանձնարարագիր, երկու օրինակից, որոնցից մեկը մնում է Կազմակերպչի մոտ, ընդ որում նախավճարը հաշվարկվում է հաղթողի կողմից վճարման ենթակա գումարի մեջ:

Աճուրդում հաղթող ճանաչված անձը վճարման հանձնարարագրում նշված գումարը սահմանված ժամկետում վճարում է հանձնարարագրում նշված հաշվին կամ դրամարկը և վճարման անդորրագիրը ներկայացնում է Կազմակերպչին:

7.2. Եթե հրապարակային ծանուցմամբ նախատեսվել է աճուրդում հաղթող համարված մասնակցի տեղում, 30 րոպեի ընթացքում, իր առաջարկված գնի առնվազն 5 տոկոսի չափով գումարի վճարումը, ապա նշված գումարը նախավճարի հետ միասին հաշվարկվում է վճարման ենթակա գումարի մեջ: Մեկից ավելի լոտ ձեռք բերելու դեպքում նախավճարը հաշվարկվում է ամենաբարձր վաճառքի գին ունեցող լոտի վճարման ենթակա գումարի մեջ:

7.3. Եթե աճուրդում հաղթող համարված մասնակիցը չի կատարում 6.2. կետի պահանջները, ապա նա զրկվում է աճուրդին մասնակցելու իրավունքից և դուրս է հրավիրվում:

Այդ դեպքում տվյալ լուտ/եր/ի աճուրդը վերսկսվում է մեկնարկային գնից: Աճուրդը շարունակվում է այնքան ժամանակ, քանի դեռ արկա են տվյալ լուտի գնորդներ/ և համարվում է չկայացած ոչ մի գնորդ չլինելու դեպքում:

Եթե աճուրդում հաղթող համարված մասնակիցը կատարում է 6.2. կետի պահանջները, ապա նա ճանաչվում է աճուրդի հաղթող և Կազմակերպչի հետ միասին ստորագրում է աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը:

7.4. Սահմանված ժամկետում վճարումները չկատարելու դեպքում հաղթող ճանաչված անձի կողմից մուծված նախավճարը /ինչպես նաև 6.2. կետում նշված վճարված գումարը/ չի վերադարձվում և տնօրինվում է Կազմակերպչի կողմից, իսկ լուտ/եր/ի աճուրդը համարվում է չկայացած:

7.5 Աճուրդում գոյացած գինը, նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափը չգերազանցելու դեպքում, վճարվում է աճուրդի արդյունքների մասին արձանագրության ստորագրման օրը:

7.6. Լուտի գնման գնի վճարման պարտավորությունները ենթակա չէ հաշվանցման:

7.7. Կազմակերպիչը աճուրդը կայանալուց կամ չկայացած հայտարարվելու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի գրավոր դիմումի հիման վրա նախավճարը վերադարձնում է աճուրդում չհաղթած մասնակիցներին, բացառությամբ 6.3. կետում նշված դեպքի: Հակառակ դեպքում նախավճարի գումարը մնում է Կազմակերպչին:

8. ԱՆՎԱԿԵՐ ԱՃՈՒՐԴՆԵՐԸ

8.1. Լուտի վերաբերյալ աճուրդն, շահագրգիռ անձի պահանջով անվավեր կարող է ճանաչվել միայն դատարկան կարգով՝ «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, այլ օրենսդրական ակտերի և սույն կարգի պահանջների խախտման դեպքում:

8.2. Լուտի վերաբերյալ աճուրդն անվավեր ճանաչելը հանգեցնում է դրանում հաղթած անձի հետ կնքված պայմանագրի անվավերության:

8.3. Աճուրդն անվավեր ճանաչելու դեպքում նոր աճուրդը կազմակերպվում և անցկացվում է սույն կանոնակարգով սահմանված կարգով:

8.5. Լուտի վերաբերյալ աճուրդն անվավեր ճանաչելու դեպքում նոր աճուրդի պայմանները կարող են փոփոխվել, եթե աճուրդի անվավերությունը կապված է եղել նախնական որևէ պայմանի հետ, ինչպես նաև եթե տեղի է ունեցել լուտի վիճակի փոփոխություն, այդ թվում՝ կապված դրա վերաբերյալ իրավունքների և պարտականությունների փոփոխման հետ:

9. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Կազմակերպիչը պարտավոր է վարել փաստաթղթային գրառումներ և պահպանել աճուրդի հետ կապված փաստաթղթերը /պայմանագրերը, արձանագրությունները և այլն/ աճուրդի ավարտից 3 տարվա ընթացքում:

9.2. Կազմակերպիչը պարտավոր է ապահովել լոտերի պահպանումը, եթե Առաջարկողի և Կազմակերպչի միջև կնքված աճուրդի մասին պայմանագրով նախատեսված են պահատվությունը վերաբերող դրույթները:

9.3. Աճուրդի անցկացման պայմանագրի գործողության ժամկետը համարվում է ավարտված, իսկ աճուրդի անցկացման ծառայությունը մատուցված, լոտ/եր/ի վաճառքից ստացված գումարը Առաջարկողին փոխանցելու /աճուրդը կայանալու դեպքում/ և աճուրդների արդյունքների ամփոփ արձանագրությունը/ները/ Առաջարկողին ներկայացնելու պահից:

10. ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՈՒՄՆ ՈՒՂՈՒԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ

10.1. Հողամասերի ուղղակի վաճառքը կատարվում է՝

ա) Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 3-րդ կետով, 66-րդ հոդվածով և 72-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում, ինչպես նաև էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ և համապատասխան գծային ենթակառուցվածքների, ցանկացած այլ բնական մենաշնորհային ոլորտի հիմնական գործունեությանն առնչվող օբյեկտների /շենքեր, շինություններ, այլ օժանդակ կառույցներ/ կառուցման համար հողամասերի տրամադրման դեպքում.

բ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ոչ բնակելի շենքերը, շինությունները բնակելիի վերափոխելու արդյունքում ձևավորված բնակելի տների պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասերն օտարելիս.

գ) գոյություն ունեցող բնակելի, հասարակական, արդյունաբերական և այլ նշանակության օբյեկտների, ինչպես նաև գյուղատնտեսական նշանակության հողամասերի ընդլայնման համար, եթե հնարավոր չէ լրացուցիչ օտարվող հողամասը որպես առանձին գույքային միավոր օտարել աճուրդային կարգով:

10.2. Հողամասերի ուղղակի վաճառքի գինը սահմանվում է տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, բացառությամբ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված հողամասերի, որոնք օտարվում են հողամասի՝ տվյալ պահին գործող կադաստրային արժեքի 30 տոկոսի չափով:

11. ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱՎԱԼՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

11.1. Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-81 հոդվածներին համապատասխան՝ հողամասը վարձակալության է տրամադրվում ժամանակավոր օգտագործման համար:

Հողամասերի վարձակալությունը չի կարող լինել 99 տարվանից ավելի ժամկետով, բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի, որոնց վարձակալության ժամկետը սահմանվում է մինչև 25 տարի, ընդ որում, վարձակալը վարձակալության պայմանագիրը նախկին կամ այլ հավասար պայմաններով կրկին կնքելիս կամ տվյալ հողամասն օտարելու դեպքում ձեռք բերելիս նախապատվության իրավունք ունի:

11.2. Հողամասերը վարձակալության տրամադրվում են մրցույթով՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

11.3. Հողամասը վարձակալության իրավունքով տրամադրվում է՝

- ա) Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին,
- բ) Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա իրավաբանական անձանց,
- գ) օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքաշինություն չունեցող անձանց, Հայաստանի Հանրապետության կացության հատուկ կարգավիճակ ունեցող անձանց,
- դ) օտարերկրյա պետություններին և միջազգային կազմակերպություններին:

11.4. Հողամասը վարձակալության իրավունքով տրամադրվում է հետևյալ նպատակներով՝

- ա) գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու,
- բ) ընդհանուր օգտագործման տարածքները /զբոսայգիներ, պուրակներ, ավտոկայանատեղեր/ դրանց նշանակությանը համապատասխան շահագործելու և բնակչությանը ծառայություններ մատուցելու,
- գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ նպատակներով օգտագործելու համար, ինչպես նաև պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վարձակալության պայմանագրի գործողության ընթացքում կամ դրանց գործողության ժամկետներն ավարտելուց հետո վարձատուի կողմից պայմանագրերի ժամկետները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ժամկետներով երկարացվելու դեպքում:

11.5. Վարձակալության իրավունքով տրամադրված գյուղատնտեսական նշանակության հողամասերի վրա կարող են կառուցվել միայն գյուղատնտեսական արտադրական նշանակության շենքեր և շինություններ՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված նորմերին համապատասխան:

11.6. Հողամասերի կառուցապատման իրավունքը տրամադրվում է միայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի վրա

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված նորմերին և կանոններին համապատասխան՝ մրցութային կարգով՝ բացառությամբ հետևյալ դեպքերի՝

ա) մինչև 20 քառ. մետր մակերեսով ավտոտնակների, կրպակների, առևտրի և սպասարկման այլ օբյեկտների համար.

բ) տրամադրված հողամասերի ընդլայնման անհրաժեշտության դեպքում, եթե լրացուցիչ տրամադրվող հողամասը հնարավոր չէ որպես առանձին միավոր տրամադրել մրցութային կարգով.

գ) բարեգործական, հասարակական կազմակերպություններին և հիմնադրամներին՝ իրենց գործունեության ընթացքում ձեռնարկատիրության հետ չկապված գործունեություն իրականացնելու համար.

դ) էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ և համապատասխան գծային ենթակառուցվածքների, ինչպես նաև ցանկացած այլ բնական մենաշնորհային ոլորտի հիմնական գործունեությանն առնչվող օբյեկտների /շենքեր, շինություններ, այլ օժանդակ կառույցներ/ կառուցման համար.

ե) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրված հողամասի մի մասն այլ հողօգտագործողի տրամադրելու դեպքում՝ նախկին հողօգտագործողի իրավունքները սահմանված կարգով դադարեցվելուց հետո.

զ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավաբանական անձանց կամ քաղաքացիներին օգտագործման իրավունքով տրամադրված հողամասերը պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հետ փոխանակման անհրաժեշտություն առաջացնելիս.

է) Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի ներկայացմամբ:

11.7. Հողամասերի վարձակալության կամ կառուցապատման իրավունքի տրամադրման համար համայնքների ղեկավարների կողմից ստեղծվում են մրցութային հանձնաժողովներ:

11.8. Մրցույթները կազմակերպվում են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 77-րդ, 78-րդ, 79-րդ և 80-րդ հոդվածներով սահմանված կարգով:

11.9. Մրցութային հանձնաժողովներն ստեղծվում են համայնքի ղեկավարի գլխավորությամբ, որոնց կազմում ընդգրկվում են համայնքի ղեկավարի աշխատակազմի համապատասխան մասնագետներ, ավագանու անդամներ և համապատասխան մարզպետարանի ներկայացուցիչներ:

11.10. Մրցութային հանձնաժողովները հրապարակում են մրցույթի պայմանները, որոնք պետք է ներառվեն ՀՀ հողային օրենսգրքով սահմանված պահանջները:

Մրցութային հանձնաժողովը կարող է սահմանել նաև այլ լրացուցիչ պահանջներ և պայմաններ:

11.11. Կառուցապատման իրավունքի տրամադրման դեպքերում մրցույթի պայմաններում նշվում են նաև քաղաքաշինական նորմերին, կառուցապատման պայմաններին և քաղաքաշինական սահմանափակումներին վերաբերող հետևյալ լրացուցիչ պահանջները՝

ա) հողամասի նկարագրությունը /կողմնորոշումը, թեքությունը, բարեկարգման վիճակը, հաղորդակցուղիների և իրացման ենթակա կառույցների առկայությունը/.

բ) կառույցի /կառույցների/ հարկայնությունը, մտավոր տեղադրումը հատկացվող հողամասում, կառուցապատման տոկոսը.

գ) շինարարության սկզբի և ավարտի ժամկետները.

դ) տարածքի բարեկարգմանը, պահպանմանն ու սպասարկմանը ներկայացվող պահանջները:

11.12. Զբոսայգիների, պուրակների, ինչպես նաև ընդհանուր օգտագործման այլ տարածքների վարձակալության կամ կառուցապատման իրավունքի մրցույթի պայմաններում նշվում են նաև՝

ա) կանաչապատ մակերեսի հարաբերությունը կառուցապատված /անջրանցիկ/ մակերեսին /փաստացի և հեռանկարային/.

բ) տարածքի այլ սեփականատերերի և օգտագործողների տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի միավորների, դրանց առկայությամբ պայմանավորված՝ սահմանափակումների և սերվիտուտների մասին տեղեկությունները.

գ) նշված տարածքում բնակչության հանգիստը կազմակերպելու նպատակով կառուցապատում իրականացվելու դեպքում թույլատրվող օբյեկտների շրջանակը:

11.13. Մրցույթների անցկացման փաթեթում ներառվում են ինչպես վարձակալության կամ կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանգրի նախագիծը, այնպես էլ մրցույթով տրամադրվող հողամասի հատակագծի նախագիծը՝ որպես պայմանագրի նախագծի հավելված:

Կառուցապատման իրավունքի տրամադրման դեպքում փաթեթում ներառվում է նաև մրցույթի պայմաններով նախատեսված՝ քաղաքաշինական նորմերի և սահմանափակումների, կառուցապատման պայմանների հիման վրա սահմանված կարգով կազմված ճարտարապետահատակագծային առաջադրանքի նախագիծը:

Մրցույթի անցկացման փաստաթղթերի նախագծերի տրամադրումը վճարովի է:

Մրցույթի կազմակերպիչը մրցույթի սրդյունքների ամփոփումից հետո 10-օրյա ժամկետում հաղթողին տրամադրում է լիազոր մարմնի որոշումը, կառուցապատման կամ վարձակալության իրավունքի համար տրամադրվող պայմանագրերը, հողամասի հատակագիծը, իսկ կառուցապատման իրավունքի տրամադրման դեպքում նաև ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

11.14. Մրցույթի արդյունքներն ամփոփելիս և հաղթողին որոշելիս՝ մրցույթային հանձնաժողովը հաշվի է առնում առաջարկվող վարձավճարի /վճարի/ չափը:

Առանձին դեպքերում կարող են հաշվի առնվել նաև՝

ա) բիզնես ծրագրիրն ու հողամասի օգտագործման տեխնիկատնտեսական հիմնավորումները.

բ) հողերի բարելավման, կուլտուր-տեխնիկական միջոցառումների իրականացման, նոր հողերի յուրացման, բնապահպանական և պատմամշակույթային միջոցառումների իրականացման վերաբերյալ առաջարկությունները.

գ) արտադրության կազմակերպման, քաղաքաշինական գործունեության իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայությունը, օբյեկտի կարճ ժամանակում կառուցման և շահագործման հնարավորությունը.

դ) հողամասի ռացիոնալ օգտագործման երաշխիքները համայնքի, մարզի սոցիալ-տնտեսական զարգացման, ազատ աշխատուժի օգտագործման նախատեսումը.

ե) համայնքի, մարզի մշտական բնակիչ լինելու կամ իրավաբանական անձի գրանցման հանգամանքը:

11.15. Մրցույթային հանձնաժողովի որոշումը ձևակերպվում է արձանագրությամբ:

Արձանագրությունն ստորագրվում է հանձնաժողովի անդամների, մրցույթում հաղթողի, ցանկության դեպքում՝ նաև մրցույթի մասնակիցների կողմից:

Մրցույթի հաղթողին որոշելիս՝ առաջացած հարցերը նշվում են արձանագրության մեջ՝ որպես հատուկ կարծիք:

Արձանագրության մեջ նշվում են մրցույթի հաղթողի տվյալները, հողամասի վարձակալության ժամկետները, հողամասի և վարձավճարի /վճարի/ չափերը, հողամասի օգտագործման նպատակային և գործառնական նշանակությունը, հողամասի օգտագործման պայմանները, մրցույթի հաղթողին տրվող իրավունքները, ինչպես նաև մրցույթում սահմանված մյուս պայմանները:

11.16. Մրցույթում հաղթած անձն արձանագրությունը և /կամ/ հողամասի վարձակալության կամ կառուցապատման իրավունքի պայմանագիրն ստորագրելուց հրաժարվելու դեպքում զրկվում է մրցույթը չկայանալու պարագայում հողամասն առանց մրցույթի վարձակալելու /կառուցապատման իրավունք ձեռք բերելու/ իրավունքից:

Եթե մրցույթը չի կայանում մեկ հայտ ներկայացված լինելու պատճառով, ապա հողամասը կարող է առանց մրցույթի 10-օրյա ժամկետում տրամադրվել առաջին հերթին հայտը ներկայացնողին, իսկ նրա հրաժարվելու դեպքում՝ հողամասը կարող է տրամադրվել նոր մրցույթ հայտարարելով:

11.17. Տրամադրված հողամասի դիմաց գանգվող վարձավճարի /վճարի/ չափը և վճարման պայմանները սահմանվում են պայմանագրով՝ մրցույթի արդյունքների հիման վրա:

11.18. Հողամասերի վարձակալության կամ կառուցապատման իրավունքի տրամադրման համար կազմվում է հողաշինանարական գործ, որում ներառվում են մրցույթի պայմաններով նախատեսված փաստաթղթերը:

11.19. Մրցույթների արդյունքների հետ կապված վեճերը լուծվում են դատական կարգով:

Հ Ի Մ Ն Ա Կ Ո Ր ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑԿՈՂ «ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԱՃՈՒՐԴԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ, ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՈՒՂՂԱԿԻ ԿԱՃԱՌՔՈՎ ԿԱՃԱՌԵԼՈՒ ԿԱՍ ԿԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ /ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱԿՈՒՆՔՈՎ/ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնքի ավագանու ներկայացվող «Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի աճուրդի անցկացման, հողամասերի ուղղակի վաճառքով վաճառելու կամ վարձակալությամբ /կառուցապատման իրավունքով/ մրցույթով տրամադրելու կանոնակարգը հաստատելու մասին» որոշման ընդունումը պայմանավորված է համայնքի սեփականություն հանդիսացող գույքի նկատմամբ ձեռնարկվող գործառույթների Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան իրականացնելու հետ:

Մասնավորապես, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ կետով սահմանված է, որ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի նկատմամբ գործառույթներ իրականացնելու պայմանները սահմանվում է համայնքի ավագանու կողմից, իսկ «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 21-րդ հոդվածներով նախատեսված է նման գործառույթների իրականացման համար կանոնակարգի առկայությունը:

Վերոգրյալի հիման վար անհրաժեշտ է համայնքի ավագանու կողմից «Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի աճուրդի անցկացման, հողամասերի ուղղակի վաճառքով վաճառելու կամ վարձակալությամբ /կառուցապատման իրավունքով/ մրցույթով տրամադրելու կանոնակարգը հաստատելու մասին» որոշման ընդունումը:

Համայնքի ղեկավար






Կ. Թղայանյան

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնքի ավագանու կողմից «Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի աճուրդի անցկացման, հողամասերի ուղղակի վաճառքով վաճառելու կամ վարձակալությամբ /կառուցապատման իրավունքով/ մրցույթով տրամադրելու կանոնակարգը հաստատելու մասին» որոշման ընդունումը այլ իրավական ակտերում, ինչպես նաև համայնքի բյուջեի փոփոխությունները չի առաջացնում, ֆինանսական ծախսեր չի պահանջում:

Համայնքի ղեկավար


 Ա. Եղիշյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԲԱՍԲԱԿԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**

ՈՐՈՇՈՒՄ

« 11 » Նոյեմբերի 2013 թ.

ԹԻՎ 28-Ն

**ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ԱՃՈՒՐՂԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ
ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ կետի և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ`

1. Թույլատրել համայնքի սեփականություն հանդիսացող` 0702-0002 և 0120-0002 ծածկագրի բնակելի կառուցապատման և արդյունաբերական օբյեկտների նշանակության գույքը օտարելու աճուրդային կարգով:
2. Աճուրդային կարգով օտարման մեկնարկային գին սահմանել ծածկագիր 0702-0002 համար 690000 ՀՀ դրամ, որից 226000 դրամը գույքի գնահատված արժեքն է, իսկ 464000 դրամը դրանով զբաղեցված հողամասի կադաստրային արժեքը, մեկնարկային քայլ սահմանել 34500 ՀՀ դրամ, մասնակցության վճար` 5000 դրամ և 0120-0002 ծածկագրի համար 1121000 ՀՀ դրամ, որից 145000 դրամը գույքի գնահատված արժեքն է, իսկ 976000 ՀՀ դրամը դրանով զբաղեցրած հողամասի կադաստրային արժեքը, մեկնարկային քայլ սահմանել 56100 ՀՀ դրամ, մասնակցության վճար` 5000 դրամ:
3. Համայնքի ղեկավարին` իրականացնել սույն որոշումից բխող համապատասխան գործառույթները, աճուրդն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության և համայնքի ավագանու կողմից հաստատված կանոնակարգին համաձայն:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆՂԱՄՆԵՐ`

1. Ալոյան Վլադիկ

2. Եղիազարյան Զավեն

3. Մկրտչյան Նորայր

4. Զրադացյանյան Գրիգոր

5. Սարիբեկյան Գոռ

6. Սարիբեկյան Մարտիկ

7. Տեր-Գեղամյան Գեղամ

	ԿՐՈՎ	ԴԵՄ	ՉԵՈՆՊԱՀ
.....	
.....	
.....	
.....	
.....	
.....	
.....	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  ԸՆԵՐԻԱԶԱՐՅԱՆ

2013 թ. Նոյեմբերի 11

գ. Բամբակաշատ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԿԱՅԱԿԱՆ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱԿՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «31» Հոկտեմբերի 2013 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման սրահայտի մատյանում նախատեսված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱԿՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

ՀՀ Արմավիրի մարզ Բամբակաշատ համայնք

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՆԱԿԵԼՈՒ ԿԱՅՐԸ ԵՎ ԱՆԿԱՆՈՒՄԸ

Մարզ Արմավիր, համայնք Բամբակաշատ 7/1 տողոց 1 շինություն

3. ԳՐԱՆՑՎԱԾ ՀԱՄԱՐ ՀԻՍՔ ՀԱՆԴԻՍԱՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

ՀՀ նախագարության 04.12.2003թ.թիվ 1677-Ն որոշում, Բամբակաշատ համայնքի ղեկավարի 04.10.2013թ.թիվ 94 որոշում

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹՎԱԳՐԵՐԸ

Կառուցողային ծածկագիրը՝ 04-031-0702-0002

Մասշտաբ չափը (ԴՍ)՝ 0.036

Նախագծի մեջ նշանագրությունը՝ բնակավայրերի

Բոլոր նշանագրան նշանակությունը կամ հողատեսքը՝ Բնակելի կառուցապատման

Բնակեցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

5. ԾԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝ Բնակելի
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝


Հ/Գ	Կադաստրային ծածկագիրը	Տեսակը	Մակերեսի չափը	Գրանցված իրավունքի տեսակը
1	04-031-0702-0002-001	Ծինություն	35.1 ք.մ.	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
2	04-031-0702-0002-002	Կիսակառույց շինություն	20.7 ք.մ.	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Երևեցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Զինալույս Սահակյան

Կադաստրային տարածքը՝ Արմավիր SU անշարժ գույքի ռեգիստր11

ՀՀ ԿԱՄԱՆԻՏԵՍԻ ԳՈՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ԿԵՆՏՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱԶԵՄԱՐԱՍԵՅՐԻ ԿԱՆՈՒՄԱՐԻ ԾՈՒՄԱՐԻԴԻ ԱՎԱՍԱՐԿԵԼԱՆ ԳՐԱՅԵԼԿԱՆԻ ԿՏ:





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԿԱՅԱԿԱՆ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱԿՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «23» Սեպտեմբերի 2013 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱԿՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

ՀՀ ԱՐՄԱԿԻՐԻ ՍԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

2: ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ԿԱՅՐԸ ԵՎ ԱՆԿԱՆՈՒՄԸ

Մարզ Արմավիր, համայնք Բամբակաշատ 14 փողոց 33 արտադրամաս

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՍՍԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱԳԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

ՀՀ Կառավարության 04.12.2003թ. թիվ 1677-Ն որոշում, Բամբակաշատ համայնքի ղեկավարի 11.09.2013թ. թիվ 85 որոշում

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 04-031-0120-0002

Մակերեսի չափը (հա)՝ 0,1

Նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Արդյունաբերական օբյեկտների

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ Արտադրական:


2) Բնութագրերը ըստ առանձին շրջությունների՝


Հ/հ	Կադաստրային ծածկագրից	Տեսակը	Մակերեսի չափը	Գրանցված իրավունքի տեսակը
1	04-031-0120-0002-001-000	Արտադրամաս u	21.1 ք.մ.	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող ապշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Վարսիկ Սողոմոնյան
զբաղեցրած պաշտոնը՝ Արմավիր SU անշարժ գույքի ռեգիստր 10

ՀՀ ԳԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի՝ վկայականը
տրամադրող սպասարկման գրասենյակի





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԲԱՄԲԱԿԱՇԱՏԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**

ՈՐՈՇՈՒՄ

« 11 » Նոյեմբերի 2013 թ.

ԹԻՎ 29

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատի գյուղական համայնքի թվով 40 / քառասուն/ սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացնել դրամական օգնություն յուրաքանչյուրին 40000 հազար դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆՂԱՄՆԵՐ՝

ԿՈՂՄ

ԴԵՄ

ՁԵՆՊԱԿ

1. Ալոյան Վլադիկ

.....
[Signature]

.....

.....

2. Եղիազարյան Զավեն

.....
[Signature]

.....

.....

3. Մկրտչյան Նորայր

.....
[Signature]

.....

.....

4. Զրադացյանյան Գրիգոր

.....
[Signature]

.....

.....

5. Սարիբեկյան Գոռ

.....
[Signature]

.....

.....

6. Սարիբեկյան Մարտիկ

.....
[Signature]

.....

.....

7. Տեր-Գեղամյան Գեղամ


.....
[Signature]

.....

.....

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ



2013 թ. Նոյեմբերի 11
գ. Բամբակաշատ